

նում են անատոյգ և նախապէս յայտնի ան-  
 Հնար և խարուսիկ յոյսերի յեակեց: Քանի  
 քանիները իրենց միակ եզր մորթում են  
 չը ծնուած մեռելի հոգու հաց տալու համար  
 և կամ չը գնուած ձիւ համար ատու շինելուս  
 իրենց եզներն են կորցնում ու ատուր շինե-  
 լու փոխանակի, աներն են քանդում: Այս մար-  
 դիկ շատ են տանջուել չը ծնուած Գատար-  
 ների վերայ վայ տալով:

Այս առակը գրեթէ ընդհանուր է բոլոր  
 Հայ գաւառներին, այս տեղ տպագրում ենք  
 արապիզոնցոց բարբառով: Տրապիզոնի բար-  
 բառով արդէն իսկ բաւական նմուշներ տպուե-  
 ցան «Արարատի մէջ»: Այդ բարբառն ունի թէ  
 ձայնական և թէ ձևական տարբերութիւն-  
 ներ: Բարբառիս հեռուեալ յատկութիւնների  
 վերայ եթէ մի քիչ ուշք դարձուի, դիւրին  
 կը լինի հասկանալը:

Տրապիզոնի բարբառում \* ձայնը յա-  
 ճախ օ-ի է փոխուում: օրինակ՝ մօնչ=մանչ,  
 ճօնփայ=ճանփայ, տօմ=տամ, գօմ=գամ,  
 օնոււ=անոււ և ըն: Ու ձայնաւորը փոխուում  
 է \* օրինակ՝ ուչ=ուչ, է ձայնաւորը է օր,  
 միծ=մեծ:

Բարբառայններից ը ձայնն է, որ կամ կոր-  
 չում է (օ=որ) կամ շ և յ փոխուում: օ-  
 րինակ՝ է-հայց=եհարց, քույն=քուրն, մաշգ  
 =մարգ, էշտօմ=երթամ և ըն:

Ձևական տարբերութիւններից գլխա-  
 ւորն է նախ՝ բայական—\* շ վերջաւորու-  
 թեամբ ձևերը: օրինակ՝ ծիծղուշ, գատուշ,  
 բերուշ, վէլուշ, այսինքն՝ ծիծղուշով, գա-  
 տուշ, բերուշ, վայելով և ըն, երկրորդ՝ \* քի  
 և կո= բայական մասնիկներն զրուում են  
 բայի վերջն և պիտին գառնում է— կի, օր-  
 չը գօմիտի=չը գամ պիտի, լցուիը կու=կը  
 լցուիը: Բարբառիս այլ յատկութիւնների մա-  
 սին տեղը չէ այստեղ խօսելու ուստի զանց ենք  
 առնում: առանձին ուշագրութիւն դարձնե-  
 լով ԻնՅՅ՝ հարցականի վերայ, ուր շ բաղա-  
 ձայնը դարձել է ց, այս էլ արդեօք յունա-  
 րէնի ազդեցութիւնը չէ:

Շ. Բ.

### Հ Ա Յ Գ Ա Ս Պ Ա Ր Ը

Վեր շիւեր, պառաւ մը կեր, իսա պառաւն ու-  
 նիր մէկ մօնչ՝ էրկու աղջիկ տղայ:

1. Հայ ժողովրդեան մէջ ընդամարացած առակ մ'է այս,  
 այլ և այլ կերպով կը պատմեն, իսկ ոմանք Գասպարի փո-  
 փոխարէն Կիրակոս. ըսն Հայաստան այս նոյնը կը պատմուի  
 քիչ ետեւեմբ եւ Գեղոյ անուն կտան:

Իսուկը էմօն (այնպէս) աղքատ կըլին օ ինչիկ  
 մը (բան մի) ունէին ուչ, պիթոււն պիթոււնէ (բո-  
 լորովին) աչառ մը ու կոզ մը կուեննօն, էլ հալ  
 (վիճակ) ու մալ ունէին ուչ:

Մօնչը էլ իտարէ (այրուստ) ընուշի ումուար  
 (յոյսը) կտաճ՝ ասաց ուր մօրը—Քաւ նէնէ՛, արօլ  
 էրէ (թոյլ տուր) էշտօմ դուրպէթ (պանգխտու-  
 թիւն), դատիմ կըլլի էօր քիչ մը փարայ մարայ դա-  
 զանմիշ (վաստկիմ) ըլլիմ, առնում ու գօմ, բէլքի  
 (թերեւ) մեղիկի պիտու բօնիրը առնոււք, ինա մէկէլ  
 աշըու հետ չիֆտ (դոյգ) մը տիւղմիշ ընիք ու բաշ-  
 լայինք այտ (արտ) քըուշի, ինչպք ի՛ր էմօն նա-  
 շար ապրինք պիտի:

Էս մօնչու մէրը ու էրկու քուրը քիչ մը խը-  
 լառ էին, աստին (ասացին) մօնչուն:

— Գնա, ամմա էգուց արի, էգուց դաս ուչ  
 նա մէկէլ օր արի:

Մօնչն է, իդա խըլառներուն վրայ ծիծղուշով  
 էլաւ, ընկաւ ճօնփայ ու գնաց, շատ քիչ գնաց  
 Ատոււած գիտէ, քաղաքի մը ըռաստ էկաւ ու ձեռք  
 էզարկ դատուշի (աշխատելու), Գատեցաւ, դա-  
 տեցաւ, էփէյիճէ (բաւական) փարա էլից ուր ճէպը,  
 ինքն իրեն ասաց՝ քիչ մէլ կենօմ, ինչիկ մէլ դատիմ,  
 խայճիմ (ծախսեմ), բօն մ'էլ աւելցնիմ, տօնիմ  
 տօմ թագաւորի խարճ (տուրք):

Հոն մնաց վից օխտ օմսու շար (շափ), դա-  
 զանմիշ էղած փարէն առաւ, դայձաւ յիտ ուր տու-  
 նը:

Էս մօնչու օնուշը Կիրակոս էր, էրկու քու-  
 րը ու մէրը իսա տեղէն, ինա տեղէն բօն մօն ժող-  
 ուէին ու ապրէին կու, հաւան (օղի մէջ) բանէին  
 ու թաւան (տապակի մէջ) կուտէին, իրենք էլ հիտ-  
 րար խըլառ խըլառ խորաթէին կու (կը խօսէին):

Կիրակոսի միծ քուր օր մը ինցօ էղաւ, էղառ  
 տէստին (կուժ) ուսը, գնաց շէշմէն (աղբիւր) ջուր  
 բերուշի, տէստին էզիր օլուխին (ծորակին) տակ-  
 ջուրը մէկ թարաւէն լցուիը կու, աղջիկը մէկ թա-  
 րաւէն կաշէր հոն էղած տօնձի ծառին ու ինքն ի-  
 րեն միտք կընէր, աշից ծառի փթած ճուղքերուն  
 պիրլանպիր (յանկարծ) էղայկ ճուկներուն, էլաց ու  
 ասաց:

— Վախ գիտի վախ, եխ էշտայի մաշղու,  
 ինձիկի ըլլիր մօնչ մը, օնուշը գնէի Գասպար, Գաս-  
 պար մեծընար, դրկիցներու մօնչերու հիտ խաղէր,  
 հիտարար իդա տեղ գէին, իդա փթած ծառի, վրան  
 էլլէին, ծառի ճուղքը փետուիր, Գասպար ըղնիր

1. Տրապիզոնի գիւղերու մէջ իբր թէ ծառից ընկած  
 է, իսկ Հայաստանի մէջ տեղ տեղ լսած նմ կամրէց ըն-  
 կած ու մնած:

տակը մեռնիր: հասցա իմ բօնը ինցօ կըլլիր: վայ կիտի Գասպար: վայ, քէօրնար, քու մօր աչքերի էդմօն օր տեսնէիր ուչ, Գասպար մեռնի, եխ ինցօ մէր ըլլիմ—իտի էօր լօմ ուչ, ասաց ու պաշայից ծունկերուն զայնուշի ու հընկա հընկա լացուշի ու վէյուշի:

Մի՞ծ քույնէ, թող էտտեղ վէյէ, պզտիկ քույն կաշէ էօր քուրը էկաւ ուչ, էշտօմ աշիմ ինցօ է-ղաւ քույս, ասաց, գնաց օր քուրը վիրս վիրս (արագ արագ) ծունկերուն զայնէ, կուլայ, թօռաւ ժըմնից քուրօջ, էհայց (եհայց):

— Մէռնիմ քեզիկի, քույս, ինչ կայ, էդ ինչ էղած ունի:

— Քէօնար քու քուրօջ աչքերի, կիս էշտա-յի մաշգու, ինձիկի ըլլիր մօնչ մը, օնունը դնէի Գասպար, իմ Գասպարս մի՞ծնար, զրկեցնուն մօն-չերնուն հիտ դէր իդա տեղ խողերի, Գասպար էլ-լէր իդա ծառնիվիր, ինա փլթած ճուղքը բունէր, ճուղքը փետուիր, Գասպար ըղնիր տակը ու մեռ-նիր, վայ, քէօնար Գասպարի մօր աչուին՝ հասցա կիս Գասպարի մէրը ըլլիմ, Գասպարի հօմար լօմ ուչ, վո՞վ լայ պիտի, վայ Գասպարս, վայ, մեռնիր քու մէր իդա օրը տեսնէր ուչ, դուն էլ ինցօ մօր-քուր ըլլիս՝ լաս ուչ:

Իսա դիր էն մէկէլ քույն էլ ույմիշ (յարմա-րիլ) էղաւ ինուր պիթուն գեղացիք մէկտեղուեցօն, կաշէին, հայցնէին կու թէ ինցօ բօն է: Օղատար (այն-չափ) մաշգ էկաւ օ հասպը չկէյ, իսունց զայա-պայուխին (աղմուկ) իդունց մէյն էլ էկաւ, աշից զա-լապայուխին, օկոնը էրիդ ուր աղջիկներուն, ասաց:

— Իդա ինչինէ, ձունը էկաւ իմ գլխուս, արևուս, ինչ էղած ունի էօր իդունը կուլօն, ճըղ-քից, օնցաւ, հասաւ աղջիկներուն քով, ինչինէ, ինչ էղած ունի ձեզիկի, էհայց մէրը:

— Ինչ ըլլի պիտի, ասաց պզտի աղջիկը ուր մօր, քույս գնացած է մաշգու կարգուած է, ու-րին մօնչ մը էղած է, օնունը դրած ունի Գասպար, Գասպար մեծըցած՝ զրկեցններուն տղոց հիտ խաղա-լօվ էկած է իդա տեղ, էլած է իդա տօնձի ծառի վրէն, ճուղքը փետուած է, Գասպար ընկած է տակը ու մեռած է, ապա եխ լօմ ուչ, վո՞վ լայ պիտի, քէօրնար Գասպարի մօրքուրին աչուին, իդա օրը տեսնէր ուչ, դուն ինցօ մօմ ըլլիս էօր Գասպարի հօմար լաս ուչ:

Իսունց մէյն էլ էդ խլառ աղջիկներուն հիտ պաշայից վէյուշի ու լացուշի:

Էղօն իրեք հոգի, ձէն ձէնի տուին ու լացին, «վայ Գասպար, վայ Գասպար, վայ Գասպար» էմօն էղաւ էօր պիթուն աշխարք թափեցօն, էկօն սէյրի, Գեղացիք ժողուած՝ էկած կաշէին թէ իսա

ղանայախլիքը (տկար կանաչք) ինցօ ըլլին պիտի, պաղին էլ զիտէին ինցօ մաշգ ըլլուշին, մէյտըցնէ-ին կու (ծաղրել, հայհոյել), մէկ քօնիին էլ ծիծ-ղուշով բերօնը բաց մնացած էր, հոն կողնած կա-շէին էօր իդունց գլխուն օյին մը խաղօն, էմօն տուն էշտօն, գեղացի մը էս պառուու ձեռքէն բունից ու ասաց:

— Մօրքուր, գիտիս ինչ կայ, եիլ վիր քեզիկի ա-սիմ:

— Հա, ինչ կայ, ինցօ արօլ էնիմ Գասպա-րըս, էլլիմ վիր, քէօնար Գասպարի մօմու աչուին, իդա օրը տեսնուր ուչ, ասաց մէմէլ ու էզարկ ծուն-կերուն, գլխուն մաղիրը փետեցին լցին վէր, քա-շից ուր ետիւն (օձիք) պատուց, էլ ինչ ասիս էօր էրաւ ուչ, հէօրիւր հէօրիւր կուլայ, հա՛ կուլայ:

— Հօրքուր, եիլ իդա աղջիկները առ ու գնա տուն, հերիք է խլըռու լօմնի իդա տեղ եզի պէս բոռչէք, ասաց մէկ ուրիշ մաշգ:

Չարէ կըլլի, պառաւը ուր ձէն դահա ա-ւելցուց:

— Քեռեկին, Գասպարի մէրը շուն ըլլի, ե՞րբ գնաց մաշգու, կարգուեցաւ, մօնչ էղաւ, մենձը-ցաւ, էկաւ իդա ծառէն վէր ընկաւ, մեռաւ, ասաց մի ուրիշ գեղացի:

Մէկ խելահաս գեղացի աշից էօր ինչ աստին պառուու, գլխուն մէջ մտաւ ուչ, միտք էդիր էմօն ինչի մ՝ ընէ էօր, էլլին էշտօն:

— Հօրօրկին (հօրեղբօր կին), ասաց, աշէ, քեզիկի պէտքը բօն մը ասիմ ու Գասպարի հոգին հոգու հաց ունենայ ուչ ինցօ կըլլի, թեղ տուն գնա՛, աչառը մօշթէ, տէրան (քահանայն) բիր, թող կաշ-գայ, Գասպարի հոգուն հաց տուր, էօր Աստուած օղորմի ասինք Գասպարի հոգին ու էշտօնք:

Իսա խորթման էդ պառուու գլխուն մտաւ, էղառ աղջիկնին, վէյուշով տուն գնաց, գետին է-ղարկ ձէյրօնը (աչառի անուն), մօշթից լըճից կաշին վրայէն, էլից ճուղը (մեծ պղինձ), էփից, ձէն էրիդ տէրային ու գեղացիներուն, էկօն, ժողուեցօն պառ-ուու տունը, տէրան օրթնից, էմեն մաշգիկ մէկ-տեղուեցօն, նստօն եղոտ միտք կերօն, էլօն վիր, միտք էրին՝ էսմօն հոգու հաց էմեն դարպա ըլլիր, միր փոյն եղոտիր:

«Աստուած օղորմի Գասպարի հոգուն» աստին էօր, էշտային պիտի, մէ մէլ տեսար էօր պառուու տղէն Կիրակոս զուրպէթէն զայձաւ, էկաւ, օպը շեմէն նիս էդիր չէգիր՝ տեսաւ զալապայուխը, էօր «Աստուած օղորմի» ասուշով կէշտօն:

Կիրակոս թառաւ նես նեն (այս այն կողմ) սիյ-տը թըրիտաց թէ վո՞վ մեռած ունի, աշից իսա ինա տեղ, տեսաւ մէյն էլ, էրկու քույն էլ հոն ինչ աչ-

ուին կաճութիւն (կը ճմանն, տորոնն), փաթուի կու իգուց, կասե.

— Կենէ, եիս կաշիմ էօր միր անէն պիթուեն սէլամէթ ին (ողջ), էս ինչ բուն է, իսա զալապալուիսը ինչին է, ո՞ւմ հօմար «Ատուած օղորմի» կասին.

— Մատաղ ըլլիմ քեղի, Քասպարի հօմար:

— Ինցօ Քասպար, եիս օր գնացի Քասպար չկեր:

— Հապա շասիս էօր մեծ քույր գնաց մաշղու, մօնչ մը եղաւ մեծըցաւ . . . մեռաւ:

— Միծ քոյս եիբ գնաց մաշղու, եիբ տղայ եղաւ, եիբ մեծըցաւ, եիբ մեռաւ:

— Էս օր:

— Էզմօն խըլառ խըլառ մի խորաթիր, նէնէ, էս օր մաշտու գնաց, էս օր տղայ եղաւ, էս օր մեծըցաւ, էս օր մեռաւ. իգա ինչ խըլառութիւն է, ինչի մը հասկընալ չիմ իգա ձիր խորաթուչէն:

Գուն ինչիկ հասկննալ մի. եիս ճէյրօն էլ մոշթեցի, հոգու հաց տուի:

— Էդ ինչինէ կասիս, նէնէ, սահիհ (ճիշդ) կասիս թէ շախա (կատակ) կընիս, իգմօն բուն վո՞վ տեսած ունի, շօն լակոտի օնունը Քասպար գրած ունիք էօր միդ մուխը օնցընիք պիտի:

— Է՛յ, շատ խորաթիլ մի, ճէյրօն մոշթէի ուչ էօր Քասպարի հոգին եշտեր կոյսուիր, ճէե-նեմ թէ ճէյրօն չկայ:

— Քա նէնէ, մէկ ճէյրօն կեր, էն էլ չոր-լանմիշ եղած ունիք. էիս հիմի ինցօ ընիմ, ում քով էշտօմ, իմ մէկ ումուտս ճէյրօնն էր:

— Շատ խորաթիլ մի, ճէյրօնի ցաւնիս, հապա Քասպարի հոգի՞ն:

— Քասպար նիւր (ո՞ւր) է էօր հոգին նիւր ըլլի, իգա ինչ խլառ, խլառ խորաթուչ է, եիս էլ կէշտօմ, ճէհնեմ թէ միր տունը քահուի կու:

— Գրողին բերօնը էշտաս ու դառնաս ուչ, նիւր կեշտաս գնա՛:

— Ա՛յ, նէնէ, օտքս նիս գնիլ չիմ կեշտօմ, ինչաք ձեղիկի լոմօն խըլառ գտնու՞մ ուչ, տուն չցօմ իտի՛ (չը գամ պիտի) ասաց ու ընկաւ ճօնփա ու գնաց, էլ եիտ աշից ուչ:

— Էշտաս ու դառնաս ուչ, ասաց մէյն:

Վիրակոս ճօմփէն էղիր ուր առաջ ու գնաց. հեմ կեշտեր, հեմ միտք կընէր, իսա ինցօ բոն բոնած ունին մէյն ու քուրերը. եիս էլ մօն գօմիտի աշխարքը, աշիմ թէ իսմօն խըլառ էլ աշիրքին մէջ գտնուի՞ կու:

Վիրակոս շատ մօն էկաւ, շատ աշխարք տեսաւ, գնաց հեռու հեռու քաղաք ու գեղ, կենէ ուր մօրը պէս տեսաւ ուչ, Վիրակոս կողնիլ չի, գիշեր ցորեկ օտփընեով ճօնփէն չափէ կու.— ինցօ իմ մօյս պէս մէկը գտնու՞մ իտի՛ կասեր:

Շատ քիչ գնաց, ըրաստ էկաւ մէկ տօն՝ իսա տունը ցախուտի (անասո) մէջ էր, դադրած էր ու ծարաւ. օնօթութիւն էլ առած ունիր ուրին, օտքը դոն շեմէն նիս էգիր, էղար բայչը, խմից. օ՛ր էրաւ, դայձաւ տօն կնկօն ասաց:

— Արուլա, ինձիկի ինչիկ մը կուտաս, ուտիմ օնօթի եիմ:

— Գուն ինչ մաշղիս, նիւր տեղէն դուգաս, նիւր կեշտաս:

Ճեհնեմին օխտը պուճախէն (գժողքի եօթ անկիւնէն) կուգօմ փույս օնօթի է, հաց տուր ուտիմ, էշտօմ փույս դայտակ է, հասկնցար, օտքի վրայ կողնուչի (կանգնելու), խորաթուչի վախտ չունիմ:

— Մատաղ ըլլիմ քեղիկի, աղբէր, ճեհնեմէն կուգաս, իմ Քասպարէն խապար ունիս, Վիրակոս ինքն իրէն ասաց՝ ահա դատյ մօրս պէս:

— Հա խապար ունիմ, ասաց Վիրակոս, քովէն կուգօմ:

— Իգա վից տարի է իմ Քասպարս մեռած է, ինցօ է:

— Ինցօ ըլլի պիտի, պէտք է, օնօթի է. հել-վա քաթա կուգէ, էս տարի էլ ձմեռն շատ էր, հալուընին կուգէ:

— Իսա խելահաս կնիկը վիր թուչի կու, Վիրակոսի հօմար կեփէ ձուածեղ. մեռած տղին հօմար էլ շինէ կու հելվա, քաթա:

Վիրակոս օնօթի էր, իգունը ինցօ պէտքը հօմէինկու, շատ վախտ էր էսմօն ուտուչի բօն տեսած չունիր, հիմի դիտիս թէ ինցօ փշտուճը զայնէ կու ձուածեղին մէջ հաւկիթի ձերմակնու խորիսը մէկէն նետեր կու բերօնը, օնծօմել կուլ կուտեր:

Վերաւ կշտացաւ, էղար հելվա քաթան, Քասպարի հալուընին, ընկաւ ճօնփա. քիչ մը տեղ գընաց, միտք էրաւ, եիս խելառ իմ, անձախ իմ մօր լոմօն մէկը գտայ, դառնօմ ինչիք մ՛էլ փետիմ, Գայձաւ եիտ ասաց.— Մօրբուր, միր տօնը հայանիկ կայ, ձիր իշու քուր կարդինք կու, ձիր էշը տուր տօնիմ էն տեղ թող դգմէթ ընէ (ծառայէ), Վնիկը ինջաւ կուեղուաը. էշն էլ ացգրեց ու էրիգ Վիրակոսին:

— Էշը հայանիկ կեշտայ, պէտքը հալաւ պէտք է, ասաց Վիրակոս:

— Հապա ինցօ ընիմ միր էշը հալաւ չունի:

— Ինցօ ընիս պիտի, քու հալաւնին բիր:

— Վըլլի՛:

— Ինցօ չըլլիր, կըլլի, եղն էլ վրէն կը պաղի, Վիրակոս ընկաւ ճօնփայ, էմեն բօնիրը բէյցուց իշուն, ինքն էլ խաղ ասուչով կեշտեր, Վէշտեր, կէշտեր, պագի պիր եիտ եիտ կաշէր.— չըլլի տօնը միծը գայ, ուր ձեռքէն աննէ:

Պօնցնի մէկ սահամ խուր վրայէն էս կնկօն մաշգը այտէն տուն դառնայ կու. կնիկը կասէ մաշգուն:

— Հասկնցար ինչ էղաւ:

— Ի՞նչ էղաւ կննէ: քա խըլառ կնիկ:

— Միը Գասպարէն խապար առի:

— Ի՞նչ խապար ի՞նչօ է:

— Պէտք է (լաւ է), Տելլա քաթա ուզած էր, իսա ձմեռ ցուրտ էղած ունիր, հալուընին էլ տուի:

— Պնիկ, խելառիս, ի՞նչ կասիս, ինչօն տուիր, ո՞ւմ տուիր:

— Մաշգ մը էկած ունիր, զրկեցի գնաց:

— Պնիկ, քեզի խափեց, միը տունը քակեցիր, ինչօն տուիր:

— Օհօ, դուն գիտիս թէ սալտէ հալուընին տուած ունիմ:

— Ուրիշ ի՞նչ տուած ունիս:

— Ի՞նչ էլ տուած ունիմ:

— Ինչօն:

— Իշու քուր կարգէին կու, էղառ գնաց:

— Խելառ կնիկ, էդ ի՞նչ բօն էրած ունիս:

— Էշը հայտնիքի հալաւ չունիր, իմ հալաւնին էլ տուի:

— Տահա ի՞նչ տուիր:

— Տահա, էղար խոզուս գնաց:

Տօն տէրնէ ացգրեց ձին, նետվեցաւ վրէն ու քշեց գնաց. էմօն թոցուց ձին էօր, հա Վիրակոսին հասնիր պիտի. Վիրակոս կիտ աշից օր, մէկը ձին թոցընէ ու կուգայ. Վիրակոս էշը էղար, ինջաւ ձիւնիվէր, պարկեցուց, օտվին կապից, էլաւ ձօնփու վրէն կննէ ուր ձօնփու հիտ կեշտէր օտօնց կիտ աշուշի, ուր այլին կաշէր ու կեշտէր:

Չիաւորը Վիրակոսին ժմնից, ասաց.

— Իդա տեղէն մաշգ մը իշով օնցաւ:

— Հա, օնցաւ:

— Թեղ կայնոմ ժմնիլ:

— Չէ:

— Ի՞նչօ թէ չէ:

— Ին գետնի վրայ քելե կու, ունի էրկու օտք, կընէ մէկ, էրկուս, մէկ, էրկուս ու կեշտայ. քու ձին ունի չիւյս օտք, կընէ մէկ, էրկուս, իրեք, չիւյս ինչաք դուն չիւյս ընիս, էն մէկ էրկուս կասէ ու կօնցնի քեզիկի, ինչիը վէր, ձիդ տուր ինձիկի, դուն էլ էն մաշգու լօմօն մէկ էրկուս էրէ ու գնա, ժմնէ:

Վիրակոս ձին էլ էղար, գնաց էշը ացգրեց, ուրիշ ձօնփով մը քշից գնաց, Գնաց գնաց օնթեցաւ աշից խոզուս ինդուս տեսաւ հեռուն կաղնուտի

օրքը (նեքքեի կողմ) մաշգ մը լուծ կընէ, շիտակ շըտկուի կեշտայ ինուր քով, բարև կուտայ, կասէ.

— Ահա, իդա ձին մէկ կուշ ապուրի ծախիմ կու, կասնիս:

Մաշգը իսա խօսքն էօր լսից, խելքը գլխէն թաւ գնաց, ուր տղան տուն զրկից, — Տղայ, թեղ գնա մոյդ ասէ, օր ճուկը վրան գնէ, արմա էփէ. մօնչը գնաց, ինքն էլ քիչ մը մնաց՝ գնաց տուն. — Քա կնիկ, թեղ էրէ, ի՞նչ կընիս, կուշ մը ապուրի ձի մը առած ունիմ:

— Քա մաշգ, շատ պէտք էրած ունիս, եիս էլ հեղնում կեշտում քաղաք:

— Քա կնիկ, հեղնուշի վախտ չէ, թեղ էրէ, դուն արմա էփէ, եիս էլ էշտում մտուր շինիմ:

Պնիկը ապուրի դատիր կու, ինքն էլ մուսուրքի մուսուրքի մէջ տեսաւ սուրուլիք քար մը, միտք էրաւ թէ իդա ձիուն գլուխը քուռի՝ ցաւցընէ պիտի, դէդ փետից հօնելու մէմէլ տեսար օր պատը քակուեցաւ՝ ինջաւ ցած, Մաշգնէ, դէպ արող էրիդ, մէկէլ պատի մէջ մուրքը շինից, էկաւ էղար կուշ մը ապուրը գնաց այտը. յաշից օր նէ ձի կայ, նէ ձիու տէրը, մէմէլ կաշէ է օր ուր երկնին էլ հօն չին, Մօն էկաւ նես նեն, տեսաւ, օր արօրի ծէրը կողնեցուցածին վիր, ծէրն էլ կողոզ մը կուղի (քակոր) կայ, էս մաշգը դէս օր տեսնու կու, շաշմիշ կըլլի, միտք ընուշով կառնու հարօրը, տուն կուգայ:

Պնիկը ցախաւիլը առած, գնացած ձիուն տակը հոշմած մուսուրքը էշդ (յարթ) լցած էր, ուր մաշգուն տեսածին պէս ասաց. — Նիւր է ձինը:

— Քա կնիկ, ձիու տէրը մաշգ չէր, հըշտակ էր, միը կընին էլ տարած ունիր:

— Նիւր տարած ունիր:

— Երկնիքը:

— Ինչ գիտիս օր էրկնիքը տարած ունի:

— Արօրի ծէրը էրկնիք անկուած էր, կընին էրկնիք էշտալնիքէն կուղած էին, կողոզ մը կուղի էկած ընկած էր արօրի ծէրը:

Իսա մաշգը օֆ էլ էրաւ ուչ, ինուր հօմար օր հըշտակը տարած ունիր:

Ամա միը հըշտակ Վիրակոսը էմօն չուխտ մը եիդ ձեռք էրիը էօր ուրեք գանուել չիր, էղար եղնին էլ գնաց տուն, տեսաւ մէրը, ասաց:

— Նենէ, իդա մալը ձեղիկի լօմօնող մաշգիկնեքէն առի, ինչաք ձեռք ձգեցի, հողիս բերօնս էկաւ, խելահառ էղիք, մէմէլ Գասպարի օնուն տաք, ձիր գլուխը ճըլլիմ կու, հա:

Ս. Հայկունի.

